Աղքատության նկարագիրը և վերլուծությունը ՀՀ-ում

Շահինյան Մ. Ս.
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ֆակուլտետի աշխատանքի տնտեսագիտության ամբիոն (Հայաստան, Երևան)
mher.shahinyan1996@gmail.com

Վճռորոշ բառեր՝ եկամտային աղքատություն, աղքատության գիծ, սպառման ագրեգատ, աղքատության խորություն, աղքատության սրություն, եկամուտների բևեռացում, գործազրկության

Описание и анализ бедности в Республике Армения

Шагинян М. С.
Армянский государственный экономический университет (Армения, Ереван)
mher.shahinyan1996@gmail.com

Резюме: Исследование бедности как следствия экономического и социального неравенства имеет первостепенное значение, поскольку она тесно связана со справедливым распределением товаров и реализацией идеи справедливости. Бедность – это социально-экономическое состояние части общества, когда население не обладает минимальными средствами к существованию, как это определено нормами общества. В статье мы проанализировали текущее состояние бедности в Армении и попытались выработать некоторые механизмы для ее преодоления.
Ключевые слова: бедность по доходам, черта бедности, совокупный расход, разрыв бедности, тяжесть бедности, поляризация доходов, уровень безработицы.

Poverty Description and Analysis in in the Republic of Armenia

Shahinyan M. S.
Armenian State University of Economics (Armenia, Yerevan)
mher.shahinyan1996@gmail.com

Abstract: The study of poverty as a consequence of economic and social inequality is of paramount importance because it is closely linked to the fair distribution of goods and the realization of the idea of justice. Poverty is a socio-economic state of a part of society when the population does not possess minimal means of subsistence as defined by the norms of the society. In the article we have analized the current state of poverty in Armenia and tried to produce some mechanisms to overcome it.
Keywords: income poverty, poverty line, consumption aggregate, poverty gap, severity of poverty, income polarization, unemployment rate.

Աղքատության՝ որպես տնտեսական ու սոցիալական անհավասարության հետևանքի դիտարկումը կարևոր նշանակություն ունի, քանի որ այն սերտ կապված է բարիքների արդար բաշխման և արդարության գաղափարի իրացման հետ: Աղքատությունը հասարակության մի մասի սոցիալ-տնտեսական այնպիսի վիճակն է, երբ բնակչության որոշակի խավեր չունեն տվյալ հասարակության նորմաներով սահմանված նվազագույն գոյամիջոցներ:

Աղքատության գնահատումը կախված է երևույթի սահմանումից: Աղքատության ժամանակակից սահմանումները հիմնված են աղքատության՝ որպես բազմաչափ երևույթի հասկացության վրա: Ըստ Համաշխարհային բանկի՝ աղքատությունն արտահայտվում է որպես.

❖ հնարավորությունների պակաս՝ եկամուտների, սպառման և ծախսերի ցածր մակարդակ (որպես կանոն՝ համեմատած ազգային աղքատության գծի հետ), արտադրական և անձնական գույքի բացակայություն կամ անբավարարություն, սոցիալական կապիտալի ցածր մակարդակ.

❖ սոցիալական ծառայությունների ցածր մատչելիություն՝ հասարակության տեսակետից անհրաժեշտ նվազագույն կրթություն ստանալու և առողջության բավարար մակարդակ ապահովելու սահմանափակ հնարավո-

րություններ.

❖ անվտանգության ցածր մակարդակ (ձայնազրկություն)՝ տնտեսական և հասարակական, այդ թվում՝ աղքատների կյանքի վրա ազդեցություն ունեցող կառույցների գործունեությանը մասնակցության, դրանց հետ բանակցելու և դրանց որոշումների վրա ազդելու հնարավորությունների պակաս[1]:

ՄԱԿ-ի սոցիալական և տնտեսական խորհրդի որոշմամբ 1984 թ. դեկտեմբերի 19-ից աղքատների թվին դասվում էին այն անձինք, ընտանիքները, անձանց խմբերը, որոնց ռեսուրսներն այնքան սուղ են, որ թույլ չեն տալիս նրանց վարել կյանքի նվազագույն ընդունելի ձևն այն պետությունում, որում ապրում են[2]:

Նոբելյան մրցանակակիր Ամարտյա Սենը նշում է, որ աղքատությունը հիմնական հնարավորությունների բացակայություն է, այլ ոչ թե ուղղակի նվազ եկամտի առկայություն, որը հանդիսանում է աղքատության չափման հիմնական չափանիշ: Նա չի ժխտում, որ եկամուտը հնարավորությունների ձեռք բերման կարևոր միջոց է, բայց մյուս կողմից, հնարավորությունների մեծացումը բերում է եկամտի աճի[3]:

Աղքատությունն ըստ ընդգրկվող օբյեկտի կարող է լինել.

- եկամտային,
- մարդկային:

Եկամտային աղքատությունն ընթացիկ կենսագործունեության ապահովման համար անհրաժեշտ եկամուտների սահմանափակումն է: Մարդկային աղքատությունն անհատի և, մասնավորապես պետության հնարավորությունների սահմանափակումն է:

Տեսականորեն, անկախ եկամուտների կամ ակտիվների մակարդակից, եթե դրանք չեն սպառվում սեփական (նյութական) պահանջմունքների բավարարման համար, ապա մարդիկ կամ տնային տնտեսությունները կարող են լինել աղքատ:

ՀՀ-ում և աշխարհի մի շարք այլ երկրներում աղքատության գնահատման հիմքում տնային տնտեսությունների ընտրանքային վիճակագրական հետազոտություններն են, որոնց միջոցով հավաքագրվում են տվյալներ եկամուտների, ծախսերի և այլ ցուցանիշների վերաբերյալ:

Սպառման (կամ ծախսերի) մեթոդով աղքատության գնահատման համար հավաքագրված տվյալների ամփոփման միջոցով հաշվարկվում է տնային տնտեսության ընթացիկ սպառման մեծությունն արտահայտող սպառման ագրեգատը: Վերջինս համեմատվում է աղքատության ընդհանուր գծի՝ պարենային և ոչ պարենային ապրանքների նվազագույն անհրաժեշտ սպառման հաշվարկային մակարդակի հետ: Այն տնային տնտեսությունները (կամ մարդիկ), որոնց սպառման մակարդակը ցածր է «Աղքատության ընդհանուր գծից», համարվում են աղքատ, իսկ եթե սպառումը ցածր է սահմանված «Պարենային աղքատության գծից»՝ համարվում են ծայրահեղ աղքատ:

ՀՀ բնակչության աղքատության վիճակը ներկայացնելու նպատակով վերլուծենք աղքատությունը բնութագրող ցուցանիշների շարժընթացը 2008-2017թթ. Ժամանակահատվածի կտրվածքով:

Ըստ ՀՀ ՎԿ տվյալների՝ 2017թ.-ին Հայաստանի տնտեսությունը նախորդ տարվա նկատմամբ գրանցել է շոշափելի աճ՝ 7.5 տոկոս, ինչը դիտարկվող ժամանաշրջանում (2008-2017թթ.) գրանցվել է առաջին անգամ: Սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ աճել է 1.0%-ով: 2017թ.-ին 2016թ.-ի համեմատ աղքատության մակարդակը նվազել է 3.7 տոկոսային կետով և կազմել 25.7%: Արդյունքում, աղքատության մակարդակը 2017թ.-ին առաջին անգամ նվազել է 2008թ.-ի աղքատության մակարդակի համեմատ (27.6%)՝1.9 տոկոսային կետով, ինչը նշանակում է, որ երկրի բնակչության ամեն չորրորդն վերին աղքատության գծից (ամսական 41 612 ՀՀ դրամ) ցածր է գտնվել (Գծապատկեր 1)[4]:

[1] Տե՛ս World development report 1990 : poverty. The World Bank Group. Washington, DC, 1990, p. 8.

[2] Рампранаш Д. , доклад «Статистическое иследование бедности» на совещании по статистике доходов домашних хозяств. Женева 14-17 марта 1994г.

[3] Морев Д.А. "Амартия Сен: Эволюция воззрений и место в современной экономической науке". М. 2013, с 22

[4] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական-վերլուծական զեկույց , ՄԱՍ 1, ՀՀ ՎԿ, Եր. 2018, էջ 39: Ծանոթություն. Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությամբ՝2008-2017թթ.-ի

25.7% աղքատների ընդհանուր թվաքանակի մեջ 1.4 %-ը ծայրահեղ աղքատ է, 9.2%-ը՝ չափավոր աղքատ (առանց ծայրահեղ աղքատների), իսկ մնացած 15.1%-ը՝ ուղղակի աղքատ է:

Աղյուսակ 1-ից երևում է, որ 2017թ.-ին ՀՀ-ում չափավոր աղքատների տեսակարար կշիռն ամբողջ բնակչության մեջ կազմել է 10.6%՝ 2008թ.-ին արձանագրված 12.6%-ի դիմաց: Ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 1.4%՝ 2008թ.-ին արձանագրված 1.6%-ի դիմաց:



Գծապատկեր 1. ՀՀ աղքատության մակարդակը և աղքատության գծերը 2017թ.-ին[5]

2017թ.-ին ընդհանուր աղքատության մակարդակը ավելի ցածր է 2008 թվականի նախաֆինանսական ճգնաժամի մակարդակից 1.9 տոկոսային կետով, չափավոր աղքատների թիվը նվազել է 2.0 տոկոսային կետով, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 0.2 տոկոսային կետով: 2017թ.-ին աղքատների ընդհանուր թվաքանակը կազմել է մոտ 766 հազար մարդ (մշտական բնակչության ցուցանիշի հաշվով[6]), նրանցից չափավոր աղքատների թվաքանակը (ներառյալ ծայրահեղ աղքատները)՝ մոտ 316 հազար, իսկ վերջիններից ծայրահեղ աղքատների թվաքանակը՝ մոտ 42 հազար մարդ:

2016թ.-ի համեմատ, աղքատների ընդհանուր թվաքանակը, ինչպես նաև ծայրահեղ աղքատների թվաքանակը նվազել է, սակայն չափավոր աղքատների թվաքանակն աճել է՝ ի հաշիվ այն ծայրահեղ աղքատների, որոնք անցել են չափավոր աղքատների շարքը:

2017թ.-ին աղքատության մակարդակի տարբերությունն ըստ քաղաքային (25.0%) և գյուղական բնակավայրերի (26.8%) կազմել է 1.8 տոկոսային կետ: Սակայն, Երևանում (22.4%) և երկրի այլ քաղաքներում (27.9%) աղքատության մակարդակի տարբերությունը մեծ է և կազմել է 5.5 տոկոսային կետ: 2017թ.-ին աղքատության խորությունը գնահատվել է 4.4%՝ 2008թ.-ի 5.1%-ի համեմատ, իսկ աղքատության սրությունը գնահատվել է 1.2 %՝ 2008թ.-ի 1.4 %-ի համեմատ:

Աղյուսակ 2-ից պարզ է դառնում, որ 2008թ. աղքատ բնակչության մակարդակը կազմել է 27.6%, իսկ 2009թ. այն զգալիորեն բարձրացել է՝ կազմելով 34.1%, ինչը պայմանավորված է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով: Հաջորդ տարիներին ևս պահպանվել է աղքատության բարձր մակարդակը, սակայն նվազման միտումով՝ 2017թ. կազմելով 25.7%: Ծայրահեղ աղքատության մակարդակը 2017թ. նվազել և կազմել է 1.4%՝ 2008թ.-ի 1.6%-ի համեմատ:

Աղքատության ցուցանիշները հաշվարկելու համար օգտագործվող աղքատության գծերը բերված են Աղյուսակ 3-ում: 2017թ.-ին աղքատության գիծը հաշվարկվել է՝ օգտագործելով 2009թ.-ին փաստագրված (էմպիրիկ եղանակով ստացված) նվազագույն պարենային զամբյուղը և գնահատված ոչ պարենային ապրանքների մասնաբաժինը: Հաշվի առնելով 2017թ.-ի գնաճը նախորդ տարվա համեմատ՝ ճշգրտվել են 2017թ.-ի աղքատության գծերը՝ ընթացիկ գներով հաշվարկված սպառման ագրեգատի հետ համեմատություն անցկացնելու նպատակով:

2017թ.-ին աղքատության՝ վերին և ստորին, ինչպես նաև ծայրահեղ աղքատության գծերը, արտահայտված մեկ չափահաս անձի հաշվով, մեկ ամսվա համար գնահատվել են՝ համապատասխանաբար, 41 612 դրամ (կամ 86.2 ԱՄՆ դոլար), 34 253 դրամ (կամ 71.0 ԱՄՆ դոլար) և 24 269 դրամ (կամ 50.3 ԱՄՆ դոլար):

համար օգտագործվել է սպառման ագրեգատի և աղքատության գծերի հաշվարկման 2009թ.-ին վերանայված (ըստ ավելի մանրամասնեցված տարրերի և աղքատության եռաստիճան մակարդակների գնահատման) մեթոդաբանությունը:

[5] Աղբյուր՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական-վերլուծական զեկույց, ՄԱՍ 1, ՀՀ ՎԿ, Եր. 2018, էջ 39:, էջ 40:

[6] Ըստ 2017թ. մշտական բնակչության միջին տարեկան թվաքանակի ցուցանիշի:

Աղյուսակ 1. ՀՀ աղքատության հիմնական ցուցանիշները 2008, 2016 և 2017 թթ.-ին (Կազմված է՝ ըստ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական-վերլուծական զեկույց , ՄԱՍ 1, ՀՀ ՎԿ, Եր. 2018, էջ 42:)

	2008թ.			2016թ.			2017թ.					
	Ծայրահեղ աղքատ	Չափավոր (շատ) աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Չափավոր (շատ) աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Չափավոր (շատ) աղքատ	Աղքատ	%-ը աղքատ բնակչության մեջ	Աղքատության խորություն	Աղքատության սրություն
Քաղաքային բնակավայ-րեր	1.9	13.0	27.6	2.0	9.6	28.8	1.2	9.8	25.0	59.7	4.1	1.1
ք.Երևան	1.1	8.1	20.1	1.9	7.8	24.9	1.0	8.3	22.4	27.7	3.6	0.9
Այլ քաղաքներ	2.8	18.2	35.8	2.1	11.6	33.2	1.3	11.5	27.9	32.0	4.7	1.3
Գյուղական բնակավայ-րեր	1.2	11.9	27.5	1.4	10.1	30.4	1.9	11.8	26.8	40.3	4.8	1.4
Ընդամենը	**1.6**	**12.6**	**27.6**	**1.8**	**9.8**	**29.4**	**1.4**	**10.6**	**25.7**	**100**	**4.4**	**1.2**

Աղյուսակ 2. ՀՀ աղքատության մակարդակի ցուցանիշների դինամիկան 2008-2017թթ.-ին (ըստ 2009թ.-ի մեթոդաբանության) (տոկոսներով) (Կազմված է՝ ըստ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական-վերլուծական զեկույց , ՄԱՍ 1, ՀՀ ՎԿ, Եր. 2018, էջ 43:)

Տարիներ	Ոչ աղքատ բնակչության մակարդակ	Աղքատ բնակչության մակարդակը		
			նրանցից չափավոր (շատ) աղքատ բնակչության մակարդակը	այդ թվում՝ ծայրահեղ աղքատ բնակչության մակարդակը
2008թ.	72.4	27.6	12.6	1.6
2009թ.	65.9	34.1	20.1	3.6
2010թ.	64.2	35.8	21.3	3.0
2011թ.	65.0	35.0	19.9	3.7
2012թ.	67.6	32.4	13.5	2.8
2013թ.	68.0	32.0	13.3	2.7
2014թ.	70.0	30.0	10.9	2.3
2015թ.	70.2	29.8	10.4	2.0
2016թ.	70.6	29.4	9.8	1.8
2017թ.	74.3	25.7	10.6	1.4

Աղյուսակ 4-ում ներկայացված է Հայաստանում 2008-2017թթ.-ի աղքատության համեմատությունը՝ ըստ սպառման և եկամտի ցուցանիշների: Եկամտի ցուցանիշի հիման վրա գնահատված աղքատության մակարդակի գնահատականները զիջում են սպառմանը՝ որպես բարեկեցության աստիճանի գնահատման հիման վրա ստացված արդյունքներ: Միևնույն ժամանակ նշենք, որ ծայրահեղ աղքատության մակարդակն ըստ եկամտի ցուցանիշի 4.5 անգամ բարձր է սպառման ցուցանիշով ծայրահեղ աղքատության մակարդակից:

Աղյուսակ 3. ՀՀ անվանական աղքատության գծերը և դրանց փոփոխությունը, 2008- 2017թթ.-ին մեկ չափահաս անձի հաշվով, մեկ ամսվա համար (ըստ 2009թ.-ի մեթոդաբանության) (դրամ) (Կազմված է՝ ըստ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական-վերլուծական զեկույց , ՄԱՍ 1, ՀՀ ՎԿ, Եր. 2018, էջ 44:)

Աղքատության գծերը	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Աղքատության պարենային կամ ծայրահեղ գիծ	17644	17483	19126	21306	21732	22993	23384	24109	23313	24269
Աղքատության ստորին գիծ	24388	25217	27410	29856	30547	32318	33101	34234	33418	34253
Աղքատության վերին գիծ	29903	30920	33517	36158	37044	39193	40264	41698	40867	41612

Աղյուսակ 4. Աղքատությունն ըստ սպառման և եկամտի ցուցանիշների, 2008-2017թթ.-ին (Կազմված է՝ ըստ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական-վերլուծական զեկույց , ՄԱՍ 1, ՀՀ ՎԿ, Եր. 2018, էջ 47: Նշում. Եկամուտը հաշվարկվել է որպես ընդամենը տնօրինվող եկամուտ և ներառում է դրամական եկամուտները, բնամթերային տեսքով սպառման դրամական արժեքը և խնայողություններից օգտագործված միջոցները:)

	Սպառումը մեկ չափահասին համարժեք (ամսական), դրամ, 2008թ.-ի միջին հանրապետական գներով	Եկամուտը, մեկ չափահասին համարժեք, (ամսական), դրամ, 2008թ.-ի միջին հանրապետական գներով	Եկամուտ/սպառում հարաբերությունը	Սպառման ցուցանիշով աղքատներ (տոկոսներով), որից՝		Եկամտի ցուցանիշով աղքատներ, (տոկոսներով), որից՝	
				Ծայրահեղ աղքատներ	Աղքատներ	Ծայրահեղ աղքատներ	Աղքատներ
2008	42 870.2	42 484.4	0.99	1.6	27.6	12.1	38.1
2009	40 250.2	43 824.7	1.09	3.6	34.1	12.2	38.2
2010	39 459.3	44 887.4	1.14	3.0	35.8	12.1	38.4
2011	40 296.9	45 326.1	1.12	3.7	35.0	13.2	37.1
2012	45 583.0	49 285.9	1.08	2.8	32.4	11.5	32.8
2013	44 751.4	48 418.2	1.08	2.7	32.0	11.5	32.7
2014	47 622.0	54 476.9	1.15	2.3	30.0	8.8	26.9
2015	47 620.0	56 692.5	1.19	2.0	29.8	6.5	24.4
2016	49 754.4	61 484.0	1.24	1.8	29.4	6.4	24.2
2017	47257.6	60761.9	1.29	1.4	25.7	6.3	20.9

Այդ տարբերությունը հիմնականում բացատրվում է սպառման բաշխման համեմատ եկամուտների բաշխման առավել բարձր անհավասարությամբ: 2017թ.-ին մեկ չափահասին համարժեք միջին ամսական եկամուտը, 2008թ.-ի գներով, գերազանցել է սպառումը 28.6%-ով, այն դեպքում, երբ 2008թ.-ին միջին ամսական եկամուտը զիջել է սպառմանը 1.0%-ով:

Աղյուսակ 5-ը ցույց է տալիս, որ ողջ բնակչության սպառման տարեկան աճը գերազանցում է աղքատ բնակչության սպառման աճին (1.1% և 0.4%, համապատասխանաբար): Որպես դրական միտում կարելի է նշել, որ ծայրահեղ աղքատների սպառումն աճել է ավելի արագ տեմպերով, քան աղքատներինը (0.5% և 0.4%, համապատասխանաբար):

Աղյուսակ 5. ՀՀ տնային տնտեսությունների սպառման աճի տարեկան տեմպերն ըստ բնակավայրերի, 2008 -2017թթ. (տոկոսներով) (Կազմված է՝ ըստ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական-վերլուծական զեկույց , ՄԱՍ 1, ՀՀ ՎԿ, Եր. 2018, էջ 50: Նշում. Աճի տեմպերը վերաբերում են սպառման աճին: P(0)-ն նշանակում է աղքատության մակարդակ (Ֆոստեր, Գրիին և Տորբեկե, 1984թ.)

Տարեկան աճի տեմպերը	Ընդամենը	ք.Երևան	Այլ քաղաքներ	Գյուղական բնակավայրեր
Աճի միջին տեմպերը (սովորական աճի տեմպը)	1.1	1.7	1.2	0.5
Միջին տոկոսային աճի տեմպը	0.5	0.1	0.9	0.0
Ամենացածր քվինտիլի աճի միջին տեմպը	0.3	0.6	1.0	0.2
Աճի միջին տեմպերը P(0) համար, ծայրահեղ աղքատության գիծ	0.5	0.1	1.1	-0.8
Աճի միջին տեմպերը P(0) համար, աղքատության ընդհանուր գիծ	0.4	0.0	1.1	-0.1

Տարածաշրջանային կտրվածքով դիտարկելիս երևում է, որ այն դեպքում, երբ աղքատ բնակչության տարեկան սպառումը 2008-2017 թթ. աճել է 0.4%-ով, ք. Երևանում աղքատների սպառումը մնացել է նույն մակարդակին, իսկ այլ քաղաքներում այն աճել է ավելի բարձր տեմպերով, քան ընդհանուր աղքատների սպառումը (համապատասխանաբար՝ 1.1 %՝ տարեկան 0.4%-ի դիմաց): Գյուղական բնակավայրերում աղքատների սպառումը 2008-2017թթ.-ին նվազել է 0.1%-ով:

Ցավոք սրտի, վերլուծությունից պարզ է դառնում, որ աղքատության վիճակն այսօր ՀՀ-ում բավականին լուրջ հիմնախնդիր է, որի հաղթահարման համար անհրաժեշտ են հստակ և համակարգված լուծումներ: Աղքատության հաղթահարումը ուղեկցվում է բարձր և ցածր եկամուտներ ունեցող խմբերի միջև եղած բևեռացումն աստիճանաբար կարգավորելով. երևույթ, որը հատուկ է փոքր, սակայն տնտեսապես զարգացած երկրներին: Սա կարող է լինել նաև ՀՀ հեռանկարը: Այս հարցի լուծման հիմնական ուղղությունը, կարծում ենք, բնակչությանը աշխատանքով ապահովելն է, նրա զբաղվածության մեծացումը, ինչը կկարգավորի բնակչության եկամուտները՝ կրճատելով բևեռացման մակարդակը:

Ներկայումս ՀՀ-ում գործազուրկների թիվը շարունակում է մնալ բարձր: 2008թ-ին այն կազմել է 231.6 հազար մարդ (16.4%), իսկ 2018թ.ին՝ 208.4 հազար մարդ (16.3%)՝ ըստ հին մեթոդաբանության կամ 234.0 հազ. (20.4%)՝ ըստ նոր մեթոդաբանության[1]: Բնակչության զբաղվածությունը մեծացնելու և աղքատությունը հաղթահարելու ճանապարհը տնտեսության առողջացումն է, հիմնականում նոր արտադրությունների կազմակերպումը, եղածի ընդլայնումը, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը, դրանց համապատասխան որակյալ աշխատուժի ապահովումը, և իհարկե ներդրումների աճը: Կարևոր խնդիր է նաև ընդհանուր ներդրումներում պետության դերի մեծացումը: Այս համատեքստում կարծում ենք, որ պետության դերը մեծ է հատկապես բարձր արդյունավետություն ունեցող ոլորտներում՝ ՏՀՏ, բնակարանային և այլ շինարարության, առողջապահության, կրթության, մանր ու միջին գործարարությունը խրախուսելու, տնտեսական բարեփոխումների, ընդերքի, ջրային, էներգետիկ, տրանսպորտի, արտաքին առևտրի, դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության և այլ բնագավառներում:

Աղքատությունը հաղթահարելու գործում պետության խնդիրն է տնտեսության ճյուղային, նյութական և ոչ նյութական ոլորտների կազմի, առաջատար և այլ ճյուղերի անհրաժեշտ հարաբերակցության, դրանց հնարավոր փոփոխությունների կանխատեսումն ու խրախուսումը: Պակաս նշանակություն չունեն նաև

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013: ՀՀ ՎԿ, Եր., 2014, էջ 53: ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019թ. հունվար-փետրվարին: ՀՀ ՎԿ, Եր, 2019, էջ 48-49:

երկրի տնտեսական ներուժը արդյունավետ օգտագործելուն ուղղված պետության ջանքերը:

Հարկավոր են կոնկրետ միջոցառումներ, բնակչության ներգրավվածություն տնտեսական գործունեության տարբեր ոլորտներում, տնտեսական ակտիվության և նախաձեռնությունների լայն հնարավորություններ: Այս տեսանկյունից կարևոր է հատկապես մանր ու միջին բիզնեսի զարգացումը, ինչը պայմաններ կապահովի նաև միջին խավի ձևավորման համար: Իսկ նյութական միջին հնարավորություններ ունեցող խավի տեսակարար կշռի ավելացումը կնպաստի իրավական ժողովրդավարական պետության ու քաղաքացիական հասարակության կայացման գործընթացի ակտիվացմանը: Մանր ու միջին բիզնեսի զարգացումն իր հերթին ենթադրում է տնտեսական գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի բարելավում, որը կընձեռի հավասար հնարավորություններ տնտեսական գործունեություն ծավալելու համար:

Հասկանալի է, որ նշված ոլորտներում ողջախոհ և նպատակասլաց գործունեության արդյունքում պետությունը կդառնա երկրի քաղաքացիների արժանավայել կյանքի երաշխավոր: Այդ առումով, կարևոր է պակաս տնտեսական, սակայն կրթական և աշխատանքային էական ներուժ ունեցող և բնակչությանը բարեկեցություն ապահովող երկրների տնտեսական մոդելների ուսումնասիրումը և, ՀՀ առանձնահատկությունները հաշվի առնելով, առաջավոր միջազգային փորձի տեղայնացումը:

Կարծում ենք, որ նշված կառուցակարգերը կարող են արդյունավետ լինել նաև աղքատության կրճատման՝ հետևաբար և բնակչության եկամուտների կարգավորման, այդ թվում՝ դրանց բևեռացման կրճատման տեսանկյունից:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական-վերլուծական զեկույց, ՀՀ ՎԿ, Եր. 2018
2. Alesina, Alberto and Dani Rodrik. “Distributive politics and economic growth”. The Quarterly Journal of Economics 109, no. 2, Oxford, United Kingdom, 1994.
3. Chase E. and Bantebya-Kyomuhendo G. (eds.) . 2015. Poverty and Shame: Global experiences, Oxford: Oxford University Press.
4. UNDP, Human Development for Everyone, Human Development Report 2016. http://hdr.undp.org/sites/default/files/2016_human_development_report.pdf
5. World development report 1990 : poverty. The World Bank Group. Washington, DC, 1990.
6. Доклад о развитии человека 2004. Культурная свобода в современном многообразном мире, UNDP, ПРООН, изд-во «Весь мир», 2004.
7. Морев Д.А. "Амартия Сен: Эволюция Воззрений и Место в Современной Экономической Науке". М. 2013.
8. Рампранаш Д., доклад «Статистическое иследование бедности» на совещании по статистике доходов домашних хозяств. Женева 14-17 марта 1994 г.